Համլետ ԱՌԱՔԵԼՅԱՆ
Ռուզաննա ԱՌԱՔԵԼՅԱՆ
Երևանի պետական համալսարան

ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԽՈՍՔԱՅԻՆ ՆԵՐԳՈՐԾՄԱՆ ՕԲՅԵԿՏ ԵՎ ԴՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Հոդվածում քննության է առնվում գիտակցության կարևոր դերը խոսքային ներգործման ընթացքում: Նկարագրվում են գիտակցության կառուցվածքը, հիմնական տիպերն ու գործառույթները: Սահմանվում են խոսքային ներգործման երկու հիմնական ձևերը և պարզաբանվում է կարգային կառույցների դերը խոսքի միջոցով ազդեցություն գործելու ընթացքում:

Բանալի բառեր. *գիտակցություն, լեզվական գիտակցություն, խոսքային ներգործում, կարգ, հասկացություն, խոսքային գործունեություն, ընկալում*

Խոսքային ներգործումն անմիջականորեն կապված է անհատական գիտակցության կամ աշխարհի մասին գոյացած պատկերի վերակառուցման, վերափոխման հետ: Այսօր, շնորհիվ տարբեր գիտակարգերում ներկայացված գիտակցության գոյաբանական նկարագրությունների, մշակված հասկացական համակարգերի ու մեթոդների, գիտակցությունը դարձել է միջգիտակարգային հետաքրքրության օբյեկտ: Այն ուսումնասիրվում է հոգեբանության, բնախոսության, նյարդահոգեբանության, լեզվաբանության, հոգելեզվաբանության կողմից:

Գիտակցական գործողությունը ենթադրում է նպատակի գիտակցում և գործելու ընթացքում որոշում կայացնելու կարողություն՝ առանց հաշվի առնելու, թե արդյոք ընթացքն ապահովում է նպատակի իրականացում, թե ոչ: Գիտակցական խոսքային գործունեության պարագայում մարդը որոշում է ընդունում իր կողմից արտաբերվող խոսքի յուրաքանչյուր բաղադրիչի վերաբերյալ: Գիտակցական է, որպես կանոն, օտար լեզվի յուրացման առաջին փուլը, երբ ուսուցանվողն այնպիսի որոշումներ է կայացնում, ինչպիսիք են, օրինակ, բառային կամ քերականական կառույցի ընտրությունը և կիրառումը: Ըստ Ն. Բերշտայնի հայեցակարգի՝ լեզվախոսքային գործունեության ամենաբարձր մակարդակը կապակցված, իմաստավորված խոսքի մակարդակն է: Հենվելով այս դրույթի վրա՝ Ա. Ա. Լեոնտևը մշակել է գիտակցվածության տարբեր մակարդակների մեկ այլ հայեցակարգ, ըստ որի՝ գիտակցված դառնալու համար, այսինքն՝ գիտակցորեն ղեկավարվելու համար որևէ բովանդակություն պետք է գտնի իր նպատակային տեղը գործունեության կառուցվածքում:

Խորհրդային հոգեբանության մեջ գիտակցությունը սահմանվում էր որպես «մի որոշակի հոգեկան համակարգ»՝ դրան հատուկ բոլոր հատկանիշներով ու գործունեության մեջ դրսևորվող միջոցներով: «Գիտակ-

ցություն» հասկացության մեկնաբանումը տարբեր հեղինակների մոտ տարբեր բնույթ է կրում: Այսպես, օրինակ, Ս. Ռուբինշտեյնը գրում է, որ «գիտակցությունն օբյեկտիվ իրականության գիտակցումն է, որն սկսվում է այնտեղ, ուր առաջանում է առարկայի օբյեկտիվ պատկերը» /Рубинштейн, 1989/: Հոգեկան երևույթների կապն օբյեկտիվ իրականության հետ գիտակցության գոյության հիմքն է: Առաջնային իմաստով և էությամբ՝ գիտակցությունն իր սահմաններից դուրս գտնվող օբյեկտի գիտակցումն է: Գիտակցության գոյացումը պայմանավորված է շրջապատող աշխարհի և հենց իր հանդեպ մարդու վերաբերմունքով: Գիտակցության կայացումը կապված է գոյության, կյանքի նոր ձևի անցման հետ, որում անհատն սկսում է հաշվի նստել այլ մարդկանց հետ՝ իր սեփական կյանքը ենթարկելով պարտավորվածությունների և աշխարհը յուրովի վերափոխելով: Այսպիսով մարդու հոգեկան գործունեությունը հանդես է գալիս նոր որակով, քանի որ ձեռք է բերվում նոր երևույթների մասին գիտելիք:

Գիտակցության առկայությունը ենթադրում է մարդու առանձնացումն իր շրջապատից, որի արդյունքում ի հայտ են գալիս օբյեկտիվ աշխարհի ճանաչման ու սուբյեկտի փոխհարաբերությունները: Գիտակցության առարկա կարող են լինել և՛ հոգեկան երևույթները, և՛ ապրումները, որոնց գիտակցումը պայմանավորված է դրանք առաջացնող օբյեկտի ճանաչմամբ: Գիտակցության զարգացումը սերտորեն կապված է մարդկանց հասարակական գործունեության հետ, երբ գոյացող պահանջմունքների բավարարումը հասարակական բնույթ է ձեռք բերում և առարկաների, երևույթների նշանակությունն սկսում է պայմանավորվել հասարակական գործոնով: Ա. Ա. Լեոնտևի աշխատանքում գիտակցման գործընթացը կապվում է մտապատկերների առարկայացման հետ՝ առարկաների սուբյեկտիվ պատկերումը լինելով /Леонтьев, 2005: 30/: Գիտակցություն է համարվում նաև մարդու գիտելիքն իր և օբյեկտիվ իրականության մասին: Ըստ Լ. Ս. Վիգոտսկու՝ գիտակցությունը «ռեֆլեքսների ռեֆլեքսն է», այսինքն, ռեֆլեքսների փոխանցումը խոսքային համակարգին /Выготский, 1963: 83/: Յու. Սորոկինը տալիս է գիտակցության հետևյալ աշխատանքային ձևակերպումը. «գիտակցությունը մարդու ոգու, բանականության գոյության ձևն է, որը կազմված է հուզաճանաչողական և աքսիոլոգիական կառույցներից» /Сорокин, 1985, цит. по Стернин, 1985: 6/: Ռ. Սոլսոն գիտակցություն է համարում մարդու գիտելիքը շրջապատող աշխարհի դրդիչների ու իրադարձությունների, ինչպես նաև այնպիսի ճանաչողական երևույթների մասին, ինչպիսիք են մտածողությունը, հիշողությունը և զգացողությունները /Солсо, 1996: 111/:

Արևմտյան գիտության պատմության մեջ «գիտակցություն» հասկացությունը սերտորեն կապված է «ինքնադիտարկում» հասկացության և մեթոդի հետ: Դեռևս Դեկարտի ժամանակներից այն հոմանշային է համարվել ներքին՝ հոգեկան երևույթներին: Հետագայում, գիտակցության և

հոգեկանի տարանջատման արդյունքում, Լայբնիցի ժամանակներից զարգացում է ապրում մեկ այլ տեսակետ, որի համաձայն՝ գիտակցությունը ոչ թե նույնանում է հոգեկանին, այլ միայն դրա մի մասն է կազմում: Զ. Ֆրեյդի տեսության մեջ այն կապվում է զգացմունքների ու ընկալումների, ինչպես նաև մտապատկերների միասնականության հետ /Фрейд, 2006: 65/: Բիհեյվիորիզմի հիմնադիր Ուոթսոնը նույնացնում է գիտակցության տպավորությունները բառայնացման ակտերի հետ: Այսօր արևմտյան հոգեբանական մի շարք տեսություններ գիտակցությունը դիտարկում են իբրև նյարդաբնախոսական տարբեր վիճակների դրսևորում:

Գիտակցությունը ձևավորվում է մարդու հոգեկանի կամային կողմի, նրա գիտելիքի և հուզական աշխարհի արտացոլմամբ: Գիտակցության անհատական աշխարհը հոգեկան իրականությունն է, որը բացվում է յուրաքանչյուրիս առջև: Այն, ինչ առարկայական աշխարհում անհատի համար դրսևորվում է որպես նրա գործունեության մոտիվ, նպատակ և պայման, պետք է ինչ-որ կերպ ընկալվի և իր արտահայտումն ստանա հիշողության մեջ: Սա վերաբերում է նաև նրա գործունեության ընթացքին և առանձնահատկություններին:

Գիտակցությունը, գլխուղեղի բարձրագույն գործառույթներից մեկը լինելով, ծառայում է մարդկանց գործունեության ղեկավարմանը՝ օբյեկտիվ աշխարհն արտացոլելով: Այն ոչ միայն արտացոլում, այլև ստեղծում, կերտում է աշխարհը: Գիտակցության բնույթին վերաբերող հարցերի պատասխանները շատ տարբեր են, սակայն բոլորն էլ այն քննում են որպես մարդու և իրականության փոխկառավարման ձև: Գիտակցության բնույթի նման ըմբռնումը ենթադրում է հարցերի ընդարձակ ընտրանք, որը փիլիսոփայության և մի շարք հումանիտար և հասարակական գիտությունների ուսումնասիրության առարկան է դառնում:

Անհատական գիտակցությունը որակվում է որպես գիտակցվող ու չգիտակցվող բաղադրիչներ պարունակող բազմաշերտ համակարգ: Հոգելեզվաբանության տեսանկյունից գիտակցության վրա կատարվող ներգործման բնույթը հասկանալու համար նախ և առաջ անհրաժեշտ է անդրադառնալ գիտակցության կառուցվածքին և դրա հետ առնչվող որոշ երևույթների քննարկմանը:

Գիտակցության ներքին կազմավորումը հիմնվում է կարգերի, հասկացությունների, զուգորդային կապերի, մտապատկերների վրա: Գիտակցությունն իր բոլոր բաղադրիչներով կապված է գործունեության հետ: Գիտակցության կառուցվածքի մեջ առկա են նաև գործառական, տրամաբանական, հուզական, վերլուծական և կառուցողական ձևերի ոլորտներ, մտածողության հաղորդակցական և հայեցողական պլաններ, ներգործության և ընկալման մոտիվացված, կամային և հուզական տարրեր: Պետք է նշել, որ գիտակցվածը և հուզականը հաճախ դժվար է սահմանազատել միմյանցից, քանի որ մարդու կողմից իրադարձության

վերապրումը զերծ չէ գիտակցված լինելուց: Տեղի ունեցող յուրաքանչյուր իրադարձություն «հոգեկան ազդակ է, իմաստային, էներգետիկ լիցք, որը գիտակցության ոլորտում վերածվում է իմաստային ամբողջի»: Ոչ պակաս կարևոր է նաև գիտակցության ինքնաբերականությունը՝ որպես կենտրոնացման կամային ունակություն /Налимов, 1989: 32/:

Հասարակայնորեն կազմակերպված աշխատանքի արդյունքում ծագում է լեզուն, բառը, որում կուտակվում և առարկայացվում են մարդու գիտելիքները: Բառի միջոցով դրանք ընդհանրանում, վերացարկվում են մասնավոր իրադրություններից՝ դառնալով հասարակության և առանձին անհատների ձեռքբերումը: Գիտակցության՝ որպես իրականության արտացոլման մարդկային ձևն անժխտելիորեն կապված է լեզվի հետ. լեզուն գիտակցության գոյացման պարտադիր պայմանն է: Այն մարդու՝ որպես հասարակության անդամի գիտակցության հասարակական ձևն է:

Հայտնի է, որ մարդու աշխատանքային գործունեությունը սերտորեն կապված է ճանաչողական գործընթացի հետ: Եթե «մտածողություն» ասելով հասկանանք ոչ միայն ճանաչողական գործունեությունը, այլև գիտակցության հետ կապված մյուս գործընթացները, ապա մտածողությունն առանց լեզվի հնարավոր չէ պատկերացնել: Լեզուն՝ վիճակ, իսկ խոսքը՝ գործընթաց համարելով՝ Գ. Ջահուկյանը գտնում է, որ վերջիններս պետք է համեմատվեն մտածողության՝ որպես գործընթացի, և գիտակցության՝ որպես վիճակի հետ /Джаукян, 1999: 12/:

Հակադրելով գիտակցության ու մտածողության կարգերը՝ հետազոտողները հաճախ ձևափոխում են լեզվի և մտածողության անժխտելի կապի մասին դրույթը՝ «մտածողություն» անվանելով գիտակցության այն ձևերը, որոնք միջնորդավորված են լեզվով, այսինքն՝ նույնացնում են մտածողությունն ու լեզվական մտածողությունը: Սա միանգամայն անընդունելի մոտեցում է հատկապես Լ. Վիգոտսկու համար, որը բազմիցս գրել է, որ «բառերի անձրևից», խոսքի ձևավորումից առաջ միտքը պետք է անցնի մինչխոսքային փուլը և ինչ-որ ձևով կերպարանափոխվի նրա գլխում: Ստացված գոյացությունը բախվում է բառի հետ և ներքին խոսքում ձյան մեջ գլորվող գնդի պես ծածկվելով դրանում առկա բառային նշանակություններով՝ արտահայտվում է խոսքում /Выготский, 1981: 112/:

Լեզվախոսքային գործունեության գործընթացների դրդիչ ուժը լեզվական մտածողությունն է՝ որպես գիտակցության բազմակողմանի գործունեություն: Այս մոտեցմամբ, լեզուն և գիտակցությունը չեն նույնացվում, իսկ նշանակությունը, հոգեբանական բնույթ ձեռք բերելով, հանդես է գալիս որպես գիտակցության բաղադրիչ:

Իրականության լեզվական մեկնաբանումը դիտարկելի է պատկերացումների, հասկացությունների, պատկերների միջոցով, որոնք, ինչպես վերը նշվեց, գիտակցության բաղադրիչներն ու հոգեկանի առաջնային արտացոլումն են: Քանի որ կարգային կառույցներն առաջանում են ոչ միայն հասկացություններից, այլև պատկերներից, ապա հարկ է տարբե-

րակել «զգայական պատկեր» և «գիտակցության պատկեր» հասկացությունները: Պատկերները մարդու գիտակցության մեջ ձևավորվում են նրա կողմից շրջապատող իրականությունը յուրացնելու չափով: Դրանք ընկալման նախնական արտացոլումն ու տեղեկատվական հանրույթն են /Հովհաննիսյան, 2001: 28/: Զգայական պատկերները կարող են լինել և՛ գիտակցված, և՛ չգիտակցված: Նշանային ձևով են արտահայտվում զգայական ընկալման ընթացքում նշանակալի կողմերը: Զգայական պատկերները սինկրետիկ երևույթներն ու հասկացական ձև ունեցող դիսկրետավորված պատկերներն են: Գիտակցության պատկերները վերացական, նյութական օբյեկտի հետ զգայական կապից գրեթե զուրկ իրակություններ են, որոնք իրենց գոյությունը պահպանում են նշանային ձևով: Նշանային, այսինքն՝ լեզվական ձևում ամրակայված են այն հատկանիշները, որոնք կարևորվում են գործունեության մեջ: Գիտակցության պատկերները, հիմնականում համընկնելով հասկացական պատկերների հետ, կարգավորված են: Էմպիրիկ պատկերներն արտացոլում են մարդու հոգեկան, մտածական, հոգևոր և գործնական հնարավորությունները: «Զգայական» ու «գիտակցության պատկերներ» հասկացությունների տարբերակումը կարևոր է, քանի որ կարգային կառույցները միատարր չեն և ձևավորվում են զգայությունից դեպի վերացական կապեր տանող պատկերներով: Ի տարբերություն հասկացությունների՝ պատկերները միշտ չեն լիովին գիտակցված, ոչ միշտ են ներգրավված նշանային համակարգի մեջ և հաճախ առարկան սուբյեկտիվորեն են արտացոլում: Մինչդեռ հասկացությունները, առարկայի օբյեկտիվ արտացոլումը լինելով, առաջանում են «պատկերացումների ռացիոնալ մշակման և տվյալ ու մյուս առարկաների միջև գոյացող հարաբերությունների բացահայտման արդյունքում» /Выготский, 1981: 65/:

Հասկացության կառուցվածքը բացահայտվում է լեզվամտածողության ընթացքում, որը, ըստ Լ.Վիգոտսկու, ունի իր սեփական օրինաչափությունները: Հասկացությունների միջև կապերի հաստատումն ու ընդհանրացումը դիտարկվում է որպես գործունեության ընթացքում տեղի ունեցող կարգայնացում: Հասկացությունների ընդհանրացման միջոցների համակարգից է կախված այն գործառական կաղապարների բնույթը, որոնցից հետագայում ձևավորվում են տրամաբանական կառույցները:

«Լեզվական գիտակցություն» հասկացությունը լեզվաբանական ու հոգելեզվաբանական ուսումնասիրություններում գործածվում է լեզվակիրների կողմից «լեզվական ճշգրտության» կամ լեզվական սխալների գիտակցման բնութագրման համար: Լեզվի առաջնային գործառույթը, ինչպես հայտնի է, հաղորդակցականն է, որի նպատակն իր սեփական և այլ մարդկանց գործունեության ղեկավարումը: Լեզվի այնպիսի գործառույթները, ինչպիսիք են վերաբերականը, հուզականը, ճանաչողականը, առնշանակայինը, արտահայտչականը և այլն, առավել հստակ են արտահայտում լեզվական գիտակցության վերը նշված գործառույթները:

Լեզվի ճանաչողական ու հաղորդակցական գործառույթների կատարումը կապված է լեզվական գիտակցության ղեկավարող-վերահսկող գործառույթների հետ: Այսինքն՝ լեզվական գիտակցությունն ապահովում է լեզվի գործառույթներից յուրաքանչյուրի իրականացումը:

Ինչպես գիտակցության այլ տիպերը, այդպես էլ լեզվականը իր գոյությունը պահպանում է անհատների գիտակցության մեջ՝ որպես լեզվակրի արտահայտչամիջոց, և հասարակական խմբերի գիտակցության մեջ՝ որպես հասարակական գիտակցություն: Լեզվական գիտակցության ամենակարևոր գործառույթն իրականության ճանաչման և արտացոլման գործառույթն է: Ինչպես նշում է Պ. Գալպերինը, ի տարբերություն ճանաչողականի՝ լեզվական գիտակցությունը ձևավորվել է որպես միասնական գործունեության կազմակերպման միջոց /Гальперин, 1976/: Հետևաբար, լեզվական գիտակցության համար առաջնային է փոխանցվող հաղորդման ազդեցիկությունը: Սա է պատճառը նաև, որ լեզվագիտակցության համար կարևոր է համարվում հաղորդման փոխանցման այնպիսի միջոցների ընտրությունը, որոնք հասարակական համապատասխան իրադրության մեջ խոսքին տալիս են այս կամ այն բնութագիրը և ապահովում ընկալման արդյունքում նաև ճիշտ գործելու հավանականությունը:

Լեզվական և ճանաչողական գիտակցությունները հատվում են, երբ վերաբերության օբյեկտ է դառնում լեզուն: Դրանցից յուրաքանչյուրը, ունենալով իր խնդիրները, սերտորեն համագործակցում է մյուսի հետ, այսպես, օրինակ, «արտալեզվական» գիտելիքը մասնակցում է լեզվական հաղորդակցմանը:

Հաղորդակցման և ներգործման հարցերը քննելիս հարկ է հիմնվել Լ. Վիգոտսկու և Ա. Ն. Լեոնտևի՝ գործունեության, Ա. Ա. Լեոնտևի՝ խոսքային գործունեության տեսությունների վրա: Լեզվախոսքային գործունեության ընթացքում գործածվող լեզվական նշաններն օրգանիզմի վրա ազդեցություն գործող դրդիչներ են համարվում: Դրանք ոչ թե դրդիչ-օբյեկտներ, այլ դրդիչ-միջոցներ են, որոնց օգնությամբ մենք ղեկավարում ենք գործողությունները: Այստեղ հարկ է նշել, որ նշանն իր սկզբնաղբյուրով վերաբերում է «բան» կոչված նյութական առարկային կամ երևույթին: Վերը նշված «նշանային» գործողությունները կարող են ոչ թե որպես կոնկրետ առարկա, այլ՝ իրողություն դիտարկվել: Վերջինս իրականում նույնպես պահանջում է իր հոգեկան, զգայական համարժեքը: Երբ նշանային գործողությունն ուղղված է ինքնահաղորդակցմանը, այսինքն՝ ինքնակառավարմանը, ապա «նշան» հասկացության մեջ, ըստ Ա. Ն. Լեոնտևի, կարելի է տարբերակել «վիրտուալ» և «ռեալ» հայեցակերպերը: Վիրտուալ նշան է համարվում նշանում առարկայացված գործունեությունը: Վիրտուալ նշանը միշտ վերացական է, քանի որ այն հանդես է գալիս որպես գործունեության միջնորդ /Леонтьев, 2005/: Ռեալ,

գործող նշանը կոնկրետ նշանային գործողության բաղադրիչն է, որը նյութական է կամ ներունակ նյութական:

Գիտակցության մեջ հասկացությունների և կարգերի գործածության ու գնահատման ձևերը, բառիմաստի առանձնահատկությունները, ինչպես վերը նշվեց, երևան են գալիս զուգորդային կապերում: Մարդու հոգեկանում զուգորդվում են զգայությունները, մտապատկերները, իմաստներն ու հասկացությունները: Գիտակցության գործունեության ոլորտում զուգորդումներն իրենց դերով նշանակությունից հետո երկրորդ տեղն են զբաղեցնում: Զուգորդումները գործառական այն կապերն են, որոնք ապահովում են հոգեկան ձևերի տեղաշարժերը, կուտակումները, բաշխումներն ու կերպարափոխումները: Զուգորդական կապերը որպես լեզվական նշանի հոգեբանական ներուղղման և իմաստավորման մեխանիզմ դիտելը տրամաբանորեն հանգեցնում է իմաստի էության բացահայտմանը: Յուրաքանչյուր նոր նշանակություն, նոր տեղեկատվություն, հայտնվելով գիտակցության ոլորտում, իր տեղն է գտնում զուգորդային «ցանցի» մեջ: Որքան մեծանում է զուգորդումների թիվը, այնքան ավելի ամբողջական է դառնում նշանակությունը: Հետևաբար, տեղեկատվության իմաստի ընկալման, յուրացման և ներգործման աստիճանը կախված է նաև զուգորդումների թվից: Այսպիսով, զուգորդական կառույցների դերն ու գործառույթը նոր հետազոտական հնարավորություններ է ընձեռում լեզվի յուրացման ուսումնասիրության ոլորտում:

Օբյեկտի ճանաչումն ընդհանուր կարգի դասելու միջոցով կոչվում է կարգայնացում: Կարգայնացումը մի այնպիսի գործողություն է, որը կատարվում է ամեն օր և հենվում է ընդհանրացման վրա: Այն սկսվում է, երբ մենք որոշում ենք կայացնում, թե տվյալ օբյեկտը ծանոթ է մեզ, թե գործ ունենք անծանոթ օբյեկտի հետ: Եթե օբյեկտը ծանոթ է, ապա փորձում ենք պարզել, թե արդյոք այն նման է որևէ այլ օբյեկտի՝ ընդհանրություն կամ տարբերություն փնտրելով: Իմաստի փնտրումը և կարգայնացումը միահյուսված են: Իմաստավորման պարագայում, որպես կանոն, տվյալ օբյեկտն առանձնանում է ընդհանուրից: Կարգային կառույցներն արտացոլվում են լեզվում, մասնավորապես՝ իմաստային կառույցներում՝ ձևավորելով լեզվական գիտակցությունը:

Յուրաքանչյուր տեսակի խոսք կարող է ներգործել գիտակցության տարբեր մակարդակների վրա՝ իրականացնելով նրա գիտակցության վերակառուցումը տարբեր ձևերով: Գիտակցության հարցերին անդրադարձող հոգեիմաստաբանության տեսանկյունից կարելի է առանձնացնել երեք այդպիսի փոփոխություն, որոնք ներգործման իրական պայմաններում միասնաբար են ներկայանում՝ տարբերվելով միայն արտահայտման աստիճանով: Նշվածներից առաջինը որոշվում է որևէ օբյեկտի հանդեպ մարդու վերաբերմունքի փոփոխմամբ՝ առանց անհատական գիտակցության կարգային կառույցների վերափոխման:

Խոսքային ներգործմանն առնչվող գրականության վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ վերջին ժամանակներում այս ոլորտի ուսումնասիրության կենտրոնում մասսայական հաղորդակցման խնդիրներն են: Սա է վկայում հասարակության զարգացման ժամանակակից փուլը, որն ընդգծում է մասսայական խոսքային ներգործման կարևորությունը: Վերջինս էլ իր հերթին պատճառաբանվում է մի շարք գործաբանական խնդիրների լուծման արդիականությամբ, որոնց շարքում է խոսքային ներգործման գործընթացների կատարելագործման կարևորությունը:

Խոսքային ներգործման մասին տեսական պատկերացումները լեզվաբանության մեջ, որպես կանոն, հենվում են հաղորդակցման տեսության վրա, ըստ որի հաղորդակցման նպատակը ստացված տեղեկության փոխանցումն է: Խոսքային ներգործման զուտ լեզվաբանական ուսումնասիրությունները սահմանափակվում են նկարագրական վերլուծությամբ: Դրանցում հաճախ ներկայացվում է հռետորության ոլորտից փոխառված այն պատկերացումը, թե ներգործվող տեքստը պետք է լինի խիստ տրամաբանական ու հասկանալի: Անշուշտ տեքստի ընկալման մատչելիությունն ու տրամաբանությունն ապահովում են դրա ներգործումը համապատասխան պայմաններում, սակայն հենց այդ պայմանների հաշվառումն է հատկապես կարևորվում խոսքային ներգործման ուսումնասիրության գործում:

Խոսքային ներգործումն ինքնին բարդ երևույթ է, քանի որ քննության օբյեկտ են դառնում թե՛ անհատը, թե՛ նրա արտաբերած խոսքը: Այսպես, ուշադրության են արժանանում այնպիսի հարցեր, ինչպիսիք են. խոսքային ներգործման բնույթի կապը հաղորդակցվողների հասարակական, հոգեբանական բնութագրի, ներգործման հոգեբանական տեսակների (ներշնչում, համոզում և այլն), տեքստի իմաստի ընկալման համար լավագույն պայմանների ստեղծում, որոնց թվում են տեքստի ընկալմանը նպաստող դիրքորոշման ձևավորումը, տեքստի մասնատումը և դրա ներկայացման տեմպի վերահսկումը:

Գիտակցության կողմից աշխարհընկալման պատկերի ձևավորման ընթացքում որպես արգայնացման խորքային ձևեր հանդես եկող հույզերը որոշում են աշխարհընկալման որակը: Այս առումով, խոսքային նմանատիպ ներգործումը բերում է գիտակցության փոփոխված վիճակի: Վերջինս որոշում է այն պայմանները, որոնց շրջանակներում ձևավորվում է աշխարհընկալումը: Խոսքային ներգործման երկրորդ տեսակը փոփոխության է ենթարկում մարդու գիտակցության մեջ ոչ թե որոշակի օբյեկտի առնշանակային իմաստը, այլ մարդու ձևավորված աշխարհընկալումը, ընդհանուր հուզավիճակը, որն էլ պայմանավորում է նրա գործունեությունը: Հույզերը վերափոխում են մարդու անհատական գիտակցության իմաստային կառույցները: Ինչպես ծուռ հայելիներ, դրանք առավել ակնհայտ են դարձնում իրականության տարբեր հայեցակեր-

պերը և, կախված հուզական երանգավորումից, փոխում են նշանակության այս կամ այն հատկանիշի կշիռը /Безменова, Белянин, 1990/: Հարց է առաջանում. կարո՞ղ են արդյոք հուզավիճակներն անմիջականորեն նպաստել կարգային նոր կառույցների ստեղծմանը, թե՞ դրանք պարզապես ամփոփում են գիտակցության գործունեությունը: Իրականում իմաստային նոր կառույցների գոյացման հիմքում աշխարհընկալման ընթացքում կատարվող մարդու ներքին ստեղծագործական աշխատանքն է: Դրանք վերծանվում են նաև մեկ այլ մարդու (գրողի, խոսակցի) գործունեությունից և հասկացվում ու յուրացվում են: Այսպիսով, խոսքային ներգործման մասին գիտությունը ենթադրում է և՛ զուտ խոսքային ներգործման, և՛ խոսքային մանիպուլյացիայի միջոցների ուսումնասիրություն: Ժամանակակից մարդը պետք է տիրապետի խոսքային ներգործման բոլոր միջոցներին, քանի որ, հայտնվելով հաղորդակցման տարբեր իրադրությունների մեջ, տարբեր տիպի մարդկանց հետ հաղորդակցվելիս նա թե՛ ազդեցիկ խոսքի և թե՛ խոսքի միջոցով ներգործման կարիք է ունենում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Безменова Н.А., Белянин Н.Н. Оптимизация речевого воздействия. Москва: Наука, 1990.
2. Выготский Л. С. Мышление и речь. Москва: Лабиринт, 1963.
3. Гальперин П. Я. Введение в психологию. Москва: Книжный дом «Университет», 1976.
4. Джаукян Г. Универсальная теория языка. Москва: Институт языкознания РАН, 1999.
5. Леонтьев А. А. Деятельность, сознание и личность. Москва: Политиздат, 2005.
6. Налимов В. В. Спонтанность сознания. Москва: Лабиринт, 1989.
7. Рубинштейн С. Л. Основы общей психологии, т.1. Москва, 1989.
8. Стернин И. А. Лексическое значение слова в речи. Москва, 1985.
9. Солсо Р. Л. Когнитивная психология. Москва, 1996.
10. Фрейд З. Основные психологические теории в психоанализе. Москва: Спектор, 2006.
11. Հովհաննիսյան Գ. Ժամանակի հոգելեզվաբանական հայեցակարգը, Երևան, Պարույր Սևակ, 2001:

Г. АРАКЕЛЯН, Р. АРАКЕЛЯН – ***Сознание как объект речевого воздействия и его структура.*** **–** В статье рассматривается структура сознания и ее основные функции. Сознание сложно по своей структуре, оно формирует своеобразный мир воздействия и восприятия. Сознание иллюстрирует реальность, а речь символизирует ее посредством мысли. Воздействие, которое происходит посредством речи, находится в центре внимания многих лингвистов, так как оно во многом определяет индивидуальные характеристики говорящих.

Ключевые слова: сознание, языковое сознание, речевое воздействие, категория, понятие, речевая деятельность, восприятие

H. ARAKELYAN, R. ARAKELYAN – ***Consciousness as an Object of Speech Impact and Its Structure.*** **–** The paper touches upon the main issues related to the structure and the functions of consciousness. Consciousness is woven out of innumerable threads, which form a complex web of symbols, a complete and specific world. Consciousness reflects the objective reality, but speech symbolizes reality and expresses thought. The impact made by speech is of great interest from the linguistic standpoint as it uncovers the individual characteristics of interlocutors.

Key words: consciousness, linguistic consciousness, speech impact, category, concepts, notions, speech activity, perception

Ներկայացվել է՝ 16.04.2019
Երաշխավորվել է ԵՊՀ Անգլիական բանասիրության ամբիոնի կողմից
Ընդունվել է տպագրության՝ 25.04.2019